

ցեալն կրկին փորձելն մեծ յիմարութիւն է: Այս պատճառն, որ ինձ ասացիր, ոչ էր ուղիղ, քանզի այս փորցելն արտաքին է եւ ոչ ներքին: Սակայն ով էս պատասխան տամ քեզ, նախ՝ արտաքնոյն եւ ապա՝ թէ՛ ներքին ուղիղ պատճառին:

— Այս ձեր սատանայեասահման օրէնն կերպիւ իմն լաւ գլնիր վասն առաջին ժամանակին մարդոցն, որք կապրէլին հինկ վեց հարիւր ամ: Այսմ ժամանակին այս ձեր օրէն ոչ վայել է, քանզի ժամանակիս մարդու կեանն է յիսուն կամ վաթսուն ամ. եթէ յաւել անցանէ, այլ անպէտ է: Ասացէք ինձ, այս ձեր փորձութիւնն քանի՞ տարի սահման ունի: Ոչ գիտեմ: Մարդն /281a/ մինչի քսան ամ անպէտ է, քանզի խելքն նորա է մանկական, անհաստատ, քակօղ եւ ոչ շինօղ: Այնուհետեւ մինչի երեսուն տարին պիտանի լինի յամենեցուն, կամ թէ հագիւ մինչի քառասուն տարի, որ ընդ մանկականին լինի վաթսուն տարի:

— Որ ասէք, թէ յիմաստուն էք եւ գիտուն, գայա ո՞չ գիտացիրք, թէ մարդ, որ այս տարի լաւ էր, եկած տարի վատ գլնի, այս տարի էր հոգէսէր, եկած տարին գլնի մարմնասէր եւ այլք: Ի սկսբաննէ մինչի ցայսօր ո՞ք լուաւ, թէ ի որդուցն Ադամայ ի միում կացութեան եկաց մինչի մահ: Ոչ ոք եւ ոչ կարէ լինիլ: Ո՞չ գիտէք, թէ մարդն է սահական, է եւ փոփոխական, ապա՞ ուրեմն դուք այլ ի՞նչ փորձութիւն խնդրէք:

— Երեք կամ չորեքտասան ամաց էլի, որ զիս բոլորովին մատուցի ձեր ձեռն եւ ամենայն հոգովս շափ ծառայեցի ձեզ անպատմելի արարողութեամբ մինչի քառասուն ամ, որպէս որ վերոյցի փոքր ի շատէ ծանուցաւ իմ արարն:

— Արդ, այն ամենայն փորձութիւն շէ՞ր, որ այլք զայն առաւել ինչ կամիք յինէն: Ահայ յիսուն եւ չորս ամաց եղէ, անցաւ կեանս: Կարծեմ, թէ այս ձեր տրիտուրն լինելոց է ինձ զկնի մահուան: Զայ էս ձեզանէ ոչինչ չեմ խնդրել, քանզի էս ազգ եմ ազնիւ տոհմէ եւ եմ Աստուծով Ռատ, նայեւ որ բնիկ անուն ցեղին իմոյց] է Ռատ, թէպէտ այնուհետեւ մինչի ցայ-

սօր երեք /281b/ անուն փոխեցաւ՝ Պալճոնց, Գասպարանց եւ մակ Մուշեղանց, բայց տան անունն մինչի ցայսօր յիշատակի Ռատինց, որ եմ Աստուծով Ռատ եւ ոչ որպէս զձեզ ժլատ եւ ծառայ մամոնայի: Ոչ կարօտիմ եւ ոչ ցանկամ ձերոցն, այլ խնդրեմ ի ձէնչ իմ արդար բարին, որ կողոպտեցիր յինէն եւ ի Աստուծոյ պարգեւացն, որ զրկեցիր զիս: Օվ որ ունի զաչս, տեսանէ եւ որ ունի զականճա, լիցցէ եւ քննեցէ իմ արարն վասն ձեր եւ զձեր հատուցումն ընդդէմ իմ: Այնժամ բարեք կարէ յիմանալ իմ ազատութիւնն եւ ձեր գոհակութիւնն, իմ առատութիւնն եւ ձեր ժլատութիւնն, իմ քրիստոնէկութիւնն եւ ձեր կռապաշտութիւնն եւ այլ:

— Տեսիր որ քո ասաց փորձութիւնն ոչ էր ուղիղ, այլ արտաքին եւ պատրողական պատճառ:

— Այլ ուղիղն եւ ճշմարիտ պատճառն այն է, որպէս որ վերոյցի գրեցի, թէ իբրեւ ժիր մշակն զկնի ամբողջ վճարելոյ զգործն զարդ դիմօք դառնայ առ տէրն իւր առ ի վարցատրիլ: Բայց անիրաւ տէրն հանգոյն մեղուաց սպանանէ զմշակն:

— Ահայ այս էր ձեր ներքին եւ ճշմարիտ պատճառն: Բայց դուն թագուցիր զներքինն եւ զճշմարիտ պատճառն եւ յայտնեցիր զարտաքինն. միշտ պահես օֆակն ազգին քո:

Պ. Դուն ամենայն բան գիտես, ընդէ՞ր հարց]անես յինէն, բայց էս այնպէս լսեցի ֆռանցիկաց, թէ դուն ի քէն անուանեցար նոցա ծառայ, այլ նոքա ոչ ճանաչէն զքեզ:

/282a/ Հ. Յամենեւին գլնի, որ մէկ մարդ վարկօրէն ասէ, թէ էս այն պարոնին եւ կամ թէ այն թագաւորին ծառան եմ, որ ոչ գիտենան տեարքն: Եթէ էս ոչ լինէի կապեալ ընդ նոսա, ինձ ի՞նչ փոյթ էր գնալ առ նոսա: Մի՞թէ խելագար էլի, որ թողէի իշխանութիւնն Պարսից թագաւորութեանն եւ գնալ կամենայի անդ եւ կամ թէ մի՞թէ խելագար էլի, որ թողէի այնքան բարին ռուսաց, զորս խոստացան ինձ եւ գնայի անդ:

— Դիցուք, թէ էս իմ կաման չընկալայ անունն նոցա: Ապա՞ ընդէ՞ր ոչ տվին իմ գրերուն